ՇԻՐԱԿԱՑՈՒ ՃԵՄԱՐԱՆ • ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿ

ՃԵՄԱՐԱՆ
LYCEUM

«ՇԻՐԱԿԱՑՈՒ ՃԵՄԱՐԱՆ»
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ



ROUND SQUARE

COLEGIO DEL MUNDO • WORLD SCHOOL • ÉCOLE DU MONDE

CIS MEMBER

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Շիրակացու ճեմարանի կրտսեր դպրոց

Մեր առաքելությունն է՝ ***կերտել ազգային հենքի վրա ձևավորված համամարդկային արժեքներ կրող իսկական մտավորական և քաղաքացի***, որի իրագործման համար պատրաստակամ ենք Շիրակացու ճեմարանի կրտսեր դպրոցում իրականացնել ***ներգրավող, համապատասխան, մարտահրավերային*** ու ***նշանակալի*** ուսումնական ծրագիր և ուսուցման գործընթաց:

1. Գնահատման փիլիսոփայությունը

Գնահատումը սովորողի ուսումնառության ապացույցների հավաքագրման, վերլուծման, անդրադարձի և կիրառման շարունակական գործընթաց է: Այն ուսումնական ողջ գործընթացի անբաժանելի մասն է. գնահատումը և ուսումնառությունը փոխկապակցված են և փոխտեղեկացնում են մեկմեկու: Գնահատումը ներառում է ուսուցիչների և սովորողների համագործակցություն՝ ուսումնական գործընթացը վերահսկելու, փաստաթղթավորելու, չափելու, հաշվետու դարձնելու և հարմարեցնելու համար:

Գնահատումը կենտրոնական տեղ է զբաղեցնում Միջազգային բակալավրիատի (IB) Կրտսեր դպրոցի ծրագրի (PYP) նպատակներում՝ սովորողների ուսումնառությունը PYP հիմնական տարրերին համապատասխան կազմակերպելու համար.

- գիտելիքների ձեռքբերում
- հասկացությունների ընկալում
- հմտությունների զարգացում
- ՄԲ սովորողի որակների և վերաբերմունքի (արժեքների) ձևավորում
- գործունակության(Agency) խթանում
- գործողությունների (արարքների) (Action) ձեռնարկում:

Գնահատման նպատակը սովորողի ուսումնառության և ուսուցման գործընթացի վերաբերյալ տեղեկություն տրամադրելն է՝ ուսուցման գործընթացը բարելավելու համար: Գնահատումը օգնում է պարզել, թե սովորողները **ինչ գիտեն**, **ինչ են հասկանում** և **ինչ կարողություններ ունեն** ուսումնառության տարբեր փուլերում: Գնահատումը իմաստային կապ պետք է ունենա սովորողի ուսուցման հետ (Stiggins, 2002; Absolum և ուրիշներ, 2009):

Գնահատման երեք մոտեցումները ծառայում են տարբեր նպատակների:

- **գնահատում** ուսումնառության համար **(assessment for learning)**,
- **գնահատումը** որպես ուսումնառություն **(assessment as learning)**,
- ուսումնառության **գնահատում (assessment of learning)**:

Վերանայվել է 2025 թվականի հուլիսին:

«Ուսումնառության համար **գնահատումը»** և **«գնահատումը** որպես ուսումնառություն» էական դրական ազդեցություն ունեն սովորողների արդյունքների վրա, քանի որ դրանք դասարանում ուսուցիչների և սովորողների աշխատանքի անբաժան մասն են (Black, Wiliam, 2010):

Ուսումնառության համար և ուսումնառության **գնահատումները** սերտորեն համահունչ են Կրտսեր դպրոցի ծրագրում (PYP) հետազոտության գործընթացին և կարող են նպաստել սովորողի ճանաչողական, սոցիալ-հուզական և վարքային զարգացմանը (Harlen, Johnson, 2014):

Գնահատում ուսումնառության համար **(assessment for learning)**,

Սա սովորելակենտրոն, առաջ նայող գործընթաց է, որը ներառում է ամբողջ ուսումնական համայնքը: Այն համագործակցային բնույթ ունի և սկսվում է սովորողի նախնական գիտելիքների գնահատումից՝ պարզելու համար՝ ինչ արդեն գիտի ու ինչ կարող է անել լրացուցիչ ուղղորդմամբ (Griffin, 2014): Նախնական գնահատման տվյալները ուսուցիչներին օգնում են նախագծել հնարավորություններ, որտեղ սովորողները կարող են փորձարկել, վերանայել իրենց մտածողության մոդելները և կապեր ստեղծել նախորդ և նոր պատկերացումների միջև:

Գնահատումը որպես ուսումնառություն **(assessment as learning)**

Այս մոտեցումը խթանում է ուսումնառությունը՝ օգնելով սովորողներին պատասխանատվություն ստանձնել սեփական ուսման համար, միաժամանակ ձևավորելով մոտիվացիա և ոգևորություն: Երբ սովորողներին խրախուսում են նախագծել, կազմակերպել և գնահատել սեփական ուսումնառությունը, նրանք զարգացնում են ինքնագնահատման, անդրադարձի հմտությունները՝ հետագա ուսումնառությունը բարելավելու նպատակով:

Ուսումնառության **գնահատում (assessment of learning)**

Այն ներկառուցված է հենց հետազոտական գործընթացի մեջ: Հետազոտության համապատասխան փուլերում այն սովորողներին հնարավորություն է տալիս գնահատելու իրենց գիտելիքների ձեռքբերումը, հասկացությունների ընկալման զարգացումը և հմտությունների ձևավորումը:

2. Գնահատման գործընթացի խնդիրներն են.

- Բացահայտել սովորողի ինքնավստահությունը, մոտիվացիան և ուսումնական ներուժը,
- Պարզել, թե սովորողներն ինչ գիտելիքներ ունեն, ինչ են հասկանում և ինչ կարողություններ ունեն ուսուցման տարբեր փուլերում,
- Դիտարկել և վերահսկել սովորողների ուսումնական գործունեությունն ու արձանագրել ձեռքբերումները,
- Գնահատել ինչպես ուսումնառության գործընթացը, այնպես էլ դրա արդյունքը:
- Հաշվետվություն տրամադրել նախապես սահմանված ուսումնառության արդյունքների վերաբերյալ,
- Սովորողի ծնողներին/խնամակալներին տրամադրել փաստեր նրա ուսումնառության և առաջընթացի մասին,
- Վերլուծել և կատարելագործել ուսումնական ծրագրերի բովանդակությունը,

- Ուսուցիչներին, դպրոցի տնօրենությանը, ծնողներին և արտաքին մարմիններին տրամադրել ամբողջական ու հավաստի տեղեկատվություն:

3. Արդյունավետ գնահատման բնութագրիչները

Գնահատումը ուսուցման գործընթացի վերաբերյալ փաստեր, հավաստի, բազմակողմանի տվյալներ հավաքագրելու շարունակական գործընթաց է՝ ուղղված ուսուցման գործընթացի զարգացմանն ու կատարելագործմանը: Այն պետք է արտացոլի առկա փորձը, ներկայացնի տարբեր կողմերից, խթանի սովորողների և ուսուցիչների համագործակցության արդյունավետ զարգացումը:

Արդյունավետ գնահատումն ունի մի շարք հիմնական բնութագրիչներ՝

- **Իրական կյանքին մոտ (authentic)** ՝ խթանում է սովորողների ներգրավվածությունը՝ կապ ստեղծելով իրական աշխարհի հետ:
- **Հստակ և կոնկրետ՝** ներառում է հստակ ձևակերպված ուսումնառության նպատակներ, հաջողության չափանիշներ և սովորելու բուն գործընթացը:
- **Բազմազան՝** օգտագործում է նպատակահարմար գործիքների և ռազմավարությունների լայն շրջանակ՝ սովորողի ուսումնառության ամբողջական պատկերը ձևավորելու համար:
- **Զարգացնող՝** կենտրոնանում է սովորողի առաջընթացի վրա, այլ ոչ թե մյուսների համեմատ նրա կատարողականի:
- **Համագործակցային՝** ներգրավում է թե՛ ուսուցիչներին, թե՛ սովորողներին գնահատման մշակման և վերլուծության գործընթացում:
- **Փոխգործուն՝** ենթադրում է շարունակական ու պարբերական երկխոսություններ սովորելու մասին:
- **Հետադարձ կապ հետագա աճի համար** ՝ տրամադրում է ներկայիս ուսումնառության վերաբերյալ հետադարձ կապ՝ նպաստելով հետագա ուսումնառության պլանավորմանը (Hattie, Timperley, 2007) և բարձրացնում է սովորողների մոտիվացիան:

4. Ով է գնահատում

Գնահատումը համագործակցային և տեղեկատվական գործընթաց է, որն ընդգրկում է ողջ դպրոցական համայնքը՝ ուսուցիչներ, սովորողներ, ընտանիքներ:

4.1. Ուսուցիչների դերը.

Գնահատման արհեստավարժություն ունեցող ուսուցիչները աջակցում են սովորողներին դառնալ գնահատման մեջ կարողունակ՝ հետևյալ ձևերով.

- Հասկանում են գնահատման նպատակը և ընտրում համապատասխան գործիքներ ու ռազմավարություններ:
- Օգտագործում են տվյալներն ու ապացույցները՝ ուսուցման պլանավորումը և ռազմավարությունները հիմնավորելու և բարելավելու համար:
- Պլանավորում են բազմաթիվ հնարավորություններ հաջողության հասնելու համար:
- Համագործակցում են՝ գնահատման մշակման, արդյունքների վերլուծության և հաջորդ քայլերի պլանավորման նպատակով:
- Տրամադրում են արդյունավետ հետադարձ կապ ուսումնառության առաջընթացի մասին:

- Վերլուծում են տվյալներն ու ապացույցները՝ սեփական գործունեությունը բարելավելու համար:
- Տրամադրում են ապացույցներ և տվյալներ՝ սովորողներին և ուսումնական համայնքին:
- Աջակցում են սովորողների վերլուծությանը՝ օրինակ ծառայելով:

4.2. Սովորողների դերը.

Սովորողները զարգացնում են գնահատման կարողունակություն իրենց ուսումնառության և դրա բարելավման ուղիների վերաբերյալ անդրադարձ կատարելով: Օգտագործելով **հստակ լեզու**՝ սովորողները նկարագրում, քննարկում և գնահատում են ուսումնառության ընթացքը և ցուցաբերում են իրենց գնահատման կարողունակությունը հետևյալ ձևերով՝

- համագործակցել ուսուցիչների հետ՝ ուսումնառության նպատակների և հաջողության չափանիշների ձևակերպման գործընթացում,
- կարողանալ ինքնագնահատել և քննարկել իրենց առաջընթացը՝ ուսումնառության նպատակներին հասնելու ուղղությամբ,
- ընտրել ապացույցներ, օրինակ՝ իրենց ուսումնառության նմուշներ, որոնք լավագույնս ներկայացնում են նախատեսված ուսումնական արդյունքները,
- զարգացնել մետաճանաչողական հմտություններ՝ իրենց ուսումնառության մասին խորհելու և հաջորդ քայլերը պլանավորելու համար,
- կիրառել հետադարձ կապն ու տարբեր ռազմավարություններ՝ ուսուցման գործընթացը հարմարեցնելու և բարելավման անհրաժեշտ պահին ու վայրում համապատասխան փոփոխություններ կատարելու համար:

4.3. Սովորողների ընտանիքների դերը.

Սովորողների ընտանիքները տեղեկանում են իրենց երեխայի(ների) գիտելիքների և հմտությունների մակարդակի, դպրոցում ունեցած վերաբերմունքի (արժեքների) և գործողությունների (արարքների) դրսևորումների մասին: Նրանք ուսուցիչներից ստանում են իրենց երեխայի(ների) զարգացման և ուսումնական գործունեության վերաբերյալ հավաստի ու ամբողջական տեղեկատվություն, այդ գործընթացին և ընդհանրապես դպրոցի աշխատանքին աջակցելու նպատակով: Ընտանիքները հնարավորություն ունեն իրենց երեխայի(ների) ձեռքբերումների ու դժվարությունների մասին տեղեկանալու՝ պարբերական այցելությունների միջոցով դառնալով ուսումնական գործընթացի ականատեսը և անմիջական մասնակիցը:

4.4 Մանկավարժական առաջնորդության դերը.

Մանկավարժական առաջնորդությունը մշտադիտարկում է գնահատման քաղաքականության իրականացումը դպրոցի ուսումնական համայնքի կողմից՝ նրա բոլոր անդամներին տրամադրելով ուսուցման և սովորողների ուսումնառության, գնահատման արդյունքների վերաբերյալ հավաստի և անհրաժեշտ տեղեկատվություն և կազմակերպում է քաղաքականության վերանայման գործընթացը:

5. Ինչ ենք գնահատում

Ուսումնական բովանդակությունը հստակեցնելուց հետո ուսուցիչները պլանավորում են բազմաթիվ հնարավորություններ, որպեսզի սովորողները զարգացնեն **գիտելիքները,**

հասկացությունների ընկալումը և հմտությունները՝ այդպիսով ՝ խթանելով սովորողի ինքնավարությունը:

Հետևյալ հարցերը օգնում են ուսուցիչներին սահմանել, թե ինչն է գնահատման ենթակա.

- Ի՞նչն ենք գնահատում՝ ուսուցման գործընթացը, թե արդյունքը:
- Արդյո՞ք այն թույլ է տալիս հասկանալ նախնական գիտելիքը՝ թե ինչ արդեն գիտի և ինչ է կարողանում անել սովորողը,
- Արդյո՞ք ուսումնառությունը պլանավորած ընթացքի մեջ է, թե սովորողը ունի բավարար պատրաստվածություն առաջ գնալու համար,
- Արդյո՞ք գնահատումը օգնում է պարզել սովորողի ընկալման խորությունն ու լայնությունը,
- Արդյո՞ք գնահատումը օգնում է ընդլայնել սովորողի գիտելիքներն ու զարգացնել հմտությունները
- Արդյո՞ք այն թույլ է տալիս հասկանալ թե ինչպես է սովորողը կապեր ստեղծում և կիրառում սովորածը:

Ուսուցիչները, ուշադիր հետևելով հետազոտության ընթացքին, դիտարկում են՝ ինչպես են սովորողները կապեր ստեղծում տարբեր առարկայական ոլորտների միջև և կիրառում հմտությունները՝ նոր գիտելիքի կառուցման համար: Այս գործընթացի համար կարևոր է, որ ուսուցիչները հաշվի են առնում հետևյալը.

- Ինչպե՞ս է զարգանում սովորողի հետազոտելու /inquiry-ի/ կարողությունը,
- Ինչպե՞ս են զարգանում սովորողի առարկայական գիտելիքները
- Ինչպե՞ս է զարգանում սովորողի պատկերացումը այն մասին, որ իրական խնդիրների լուծումը պահանջում է տարբեր առարկաների իմացություն,
- Ինչպե՞ս է զարգանում հասկացությունների ընկալումը,
- Ինչպե՞ս են զարգացնում հմտությունները,
- Ինչպե՞ս են իրականացվող գործողությունները փաստում կենտրոնական գաղափարի ընկալման մասին,
- Արդյո՞ք սովորողը կարողանում է աշխատել ինչպես ինքնուրույն, այնպես էլ ուրիշների հետ համագործակցելով:

Սա նպաստում է նրան, որ սովորողը գիտակցից կերպով մասնակցի իր ուսումնառությանը և պատասխանատվություն կրի դրա համար:

6. *Ինչպե՞ս ենք գնահատում*

Կրտսեր դպրոցի ծրագրում (PYP) գնահատումն ունի չորս հիմնական բաղադրիչ.

- **Ուսումնառության մշտադիտարկում**
- **Ուսումնառության փաստաթղթավորում**
- **Ուսումնառության չափում և վերլուծություն**
- **Ուսումնառության մասին հաշվետվություն**



Կրտսեր դպրոցի ծրագրում (PYP) շեշտը դրվում է հատկապես ուսուցման **մշտադիտարկման** և **փաստաթղթավորման** վրա, քանի որ դրանք սովորողին տրամադրում են գործնական և կիրառելի հետադարձ կապ:

6.1. Ուսումնառության մշտադիտարկում

Մշտադիտարկման նպատակը սովորողի առաջընթացի դիտարկումն է՝ անձնական նպատակների և հաջողության չափանիշների համատեքստում: Ուսուցիչների կողմից այն իրականացվում է ամեն օր, մի շարք ռազմավարությունների՝ դիտարկումների, հարցադրումների, անդրադարձի, համադասարանցիների և ուսուցիչների հետ քննարկումների, ինչպես նաև լավ մշակված հետադարձ կապի միջոցով, որը խթանում է հետագա ուսումնառության քայլերը: Որպես գործիքներ մենք կիրառում ենք՝ բաց առաջադրանքներ, բանավոր հարցումներ և գրավոր աշխատանքներ, սովորողի թղթապանակի վարում:

Գիտելիքների, հասկացությունների ընկալման և ուսումնառության մոտեցումների վերաբերյալ հետադարձ կապը նպաստում է, որ սովորողները առաջ շարժվեն դեպի իրենց ցանկալի ուսումնական նպատակները: Հետևաբար՝ հետադարձ կապ տրամադրելիս ուսուցիչները ուշադրության կենտրոնում են պահում հետևյալ հարցերը.

- **Հետադարձ կապ (feedback).** Ինչպե՞ս եմ ես սովորում/ ինչպես է ամեն ինչ ընթանում:
- **Աջակցություն հետագա աճի համար (feedforward).** Ո՞րն է հաջորդ քայլը:

6.2. Ուսումնառության փաստաթղթավորում

Փաստաթղթավորումը սովորողի ուսումնառության ապացույցների հավաքագրված փաթեթն է, որը կարող է լինել գրավոր, թվային կամ այլ ձևաչափի: Այն դարձնում է ուսումնառության գործընթացը տեսանելի ու թափանցիկ և օգնում սովորողին վերադառնալ ուսումնական նպատակներին ու արձագանքել դրանց:

Ուսուցիչները և սովորողները կարող են փաստաթղթավորել իրենց ուսումնառությունը տարբեր ձևաչափերով, օրինակ՝

- Ուսումնական գրառումներ / նշումներ օրագրերում, խմբի մատյաններ
- Ուսումնական պատմություններ/ հետազոտության տետրեր, հետազոտողի օրագիր,
- Սովորողի թղթապանակ

Որպես գործիքներ կիրառվում են աշխատանքային ձևաթղթեր, ստուգաթերթիկներ, ռուբրիկներ, կարճ գրառումներ:

Կրթական հատուկ կարիքներ ունեցող երեխաների համար մշակվում են անհատական ուսումնական ծրագրեր՝ ԱՈՒԾ, տես Ներառական քաղաքականությունը:

6.3. Ուսումնառության չափում և վերլուծություն

Չափման նպատակը որոշակի ժամանակահատվածում սովորողի ձեռքբերումները գրանցելն է: Չնայած ուսումնառության ոչ բոլոր ոլորտներն է հնարավոր կամ անհրաժեշտ չափել, համապատասխան գործիքները կարող են լրացուցիչ պատկեր տալ սովորողի առաջընթացի մասին: Տվյալների ճիշտ վերլուծությունն օգնում է որոշումներ կայացնել ուսումնառության հաջորդ փուլերի վերաբերյալ:

Ըստ անցկացման ժամանակի և նպատակի՝ տարբերակում ենք գնահատման հետևյալ տեսակները ***հայտորոշիչ*** (նախնական), ***ընթացիկ*** (ձևավորող)և ***ամփոփիչ*** (վերջնական):

Աղյուսակ 1

	Հայտորոշիչ/նախնական	**Ձևավորող/ընթացիկ**	**Ամփոփիչ/վերջնական**
Կապ գնահատման մոտեցումների հետ	Գնահատում ուսումնառության համար	Գնահատում ուսումնառության համար և գնահատումը որպես ուսումնառություն	Ուսումնառության գնահատում
նպատակ	կիրառվում է ուսուցման փուլի սկզբում՝ սովորողների կարիքները հստակեցնելու և ուսուցման գործընթացը դրանց համապատասխան ուղղորդելու նպատակով	ուսուցման գործընթացի խթանում պարբերաբար կանոնավոր հետադարձ կապի ապահովման միջոցով և տեղեկատվության տրամադրում հաջորդ փուլերն արդյունավետորեն պլանավորելու համար	ուսուցման գործընթացի կոնկրետ հատվածի ավարտին ուսումնական գործընթացի արդյունքների մասին տեղեկատվության ապահովումն է
գործառույթ	հնարավորություն է տալիս ուշադրություն դարձնել յուրաքանչյուր սովորողի պատրաստվածությանն ու պահանջներին, ուսման ոճին, հետաքրքրություններին, նախնական գիտելիքներին և պլանավորել՝ կառուցողական մոտեցմամբ:	օգնում է սովորողներին խորացնել գիտելիքներն ու ընկալումները, խթանել ինքնավստահությունն ու սովորելու խանդավառությունը, զարգացնել ինքնագնահատումն ու ինքնաանդրադարձը, ինչպես նաև բացահայտել հաջողության հասնելու ուղիները	տեղեկություններ է պարունակում սովորողների ձեռք բերած գիտելիքների, ձևավորված հմտությունների, հասկացությունների և կենտրոնական գաղափարի ընկալման մակարդակի մասին

6.3.1. Ուսուցման վերլուծություն և հաղորդում

Ուսուցիչները տարբեր աղբյուրներից հավաքված տվյալներն օգտագործում են՝ ինչպես առանձին սովորողների, այնպես էլ սովորողների խմբերի և ամբողջ դպրոցի մակարդակով՝ ուսումնառության օրինաչափություններն ու զարգացման ուղղությունները բացահայտելու նպատակով: Վերլուծության ժամանակ իրականացվում է տվյալների կազմակերպում, համախմբում և տարանջատում՝ ստանալու այնպիսի տեղեկատվություն, որը նպաստում է վկայող փաստերի վրա հիմնված որոշումների կայացմանը: Այս վերլուծությունը օգնում է ուսուցման վերաբերյալ գիտակցված որոշումներ կայացնել՝ համահունչ դպրոցի կրթական ռազմավարությանը: Ընթացքում սովորողները նույնպես մասնակցում են՝ զարգացնելով իրենց գնահատման կարողունակությունը:

6.4 Ուսումնառության մասին հաշվետվություն

Ուսումնառության մասին հաշվետվությունը տեղեկացնում է ուսումնական համայնքին սովորողների ուսուցման առաջընթացի և ձեռքբերումների մասին: Հաշվետվությունն արդյունավետ դարձնելու համար ծնողները, ուսուցիչները և աշակերտները համագործակցում են: Հաշվետվությունների տեսակները նկարագրված են Աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2

Տեսակ	Տարիքային խումբ	հաճախություն	Ինչի մասին է
Ծնողական հանդիպումներ	բոլոր	Տարվա մեջ 3 անգամ (սեպտեմբերի 1-15-ը, փետրվարի 15 - 28-ը, հունիսի 15 – 20-ը), նաև ըստ անհրաժեշտության	ուսումնական գործընթացի վերաբերյալ ընդհանրական հարցեր, ծրագրի առաջընթաց
Ծնող-ուսուցիչ երկկողմ հանդիպումներ	բոլորը	2 անգամ և ըստ անհրաժեշտության	Սովորողի առաջընթացը, կրթական կարիքներ
Սովորող-ծնող-ուսուցիչ եռակողմ հանդիպում (3-Way Conference)	ՄԿ ավագ խումբ, 1-4-րդ դասարաններ	1 – 2 անգամ, 3-4-րդ դասարանների համար 1-ին կիսամյակի ավարտին, ՄԿ ավագ խմբերի և 1-2-րդ դասարանների համար՝ գարնանային արձակուրդին,	Անդրադարձ անելու, նպատակներ դնելու և գործողություններ պլանավորելու կարողություններ
*Թղթապանակ**	1-4-րդ դասարաններ	Ամբողջ տարի	Ուսումնառության առաջընթաց
*Հետազոտական թեմատիկ միավորի՝ ՀԹՄ, հաշվետվության ձևաթուղթ / UOI Report Card***	բոլորը	1-4-րդ դասարան՝ յուրաքանչյուր ՀԹՄ–ից հետո	Վերառարկայական գիտելիք, հասկացություններ, հմտություններ, ՄԲ սովորողի նկարագիր
Կիսամյակային/տարեկան հաշվետվության ձևաթուղթ/ Semester Report Card	բոլորը	ՄԿ և 2-4-րդ դասարաններ՝ կիսամյակը 1 անգամ, 1-ին դասարան՝ 1 անգամ տարվա ավարտին,	Վերառարկայական և առարկայական գիտելիք և հմտություններ
*PYP Ստուգատես****	4-րդ դասարան	1 անգամ	ԿԴԾ ողջ ուսումնառությունը
Բանավոր հարցում	բոլորը	Կիսամյակում Մայրենիից՝ 8-14 Մաթեմատիկայից՝ 6-8 Ռուսաց և օտար լեզուներից՝ 6-7	Առարկայական գիտելիք և հմտություններ (Հավելված 1)
Թեմատիկ աշխատանք	2-4-րդ դասարաններ	Կիսամյակում Մայրենիից և Մաթեմատիկայից՝ 4-ական, Ռուսաց և օտար լեզուներից՝ 3-ական	
Գործնական աշխատանք	բոլորը	Կիսամյակում Մայրենիից և Մաթեմատիկայից՝ 1-ական,	
Կիսամյակային գրավոր աշխատանք	2-4-րդ դասարաններ	Մայրենիից, Մաթեմատիկայից, Օտար լեզվից և Ռուսաց լեզվից յուրաքանչյուր կիսամյակում 1 անգամ	
Ամփոփիչ աշխատանք	1-ին դասարան	1-ին տարվա վերջում, Մայրենիից և Մաթեմատիկայից	Մնացորդային գիտելիքների ստուգում
Տոներ	1-4-րդ դասարաններ	Շաբաթական 1 անգամ	Յուրաքանչյուր սովորողի՝ իսկական քաղաքացու կերպարին ձգտելու քայլերի ամփոփում, խմբի կողմից կատարված բարի գործերի ամփոփում

Վերանայվել է 2025 թվականի հուլիսին:

*Սովորողի թղթապանակ՝ դպրոցը պարտավորվում է սովորողի ուսման ընթացքի վերաբերյալ հավաստի և վկայող փաստեր հավաքել: Թղթապանակը ուսումնական գործընթացի վերաբերյալ տեղեկատվության հավաքման և պահման լավագույն տարբերակներից է, որը ծառայում է սովորողի առաջընթացն ու ձեռքբերումները տեսանելի դարձնելուն: Այն յուրաքանչյուր սովորողի «ուսումնառության պատմությունն» է, նրա հաջողությունների, անձի զարգացման ստեղծագործական աճի վկայությունը՝ կոնկրետ օրինակների ու ուղեկցող դիտարկումների տեսքով: Այն կազմվում է մեկ ուսումնական տարվա համար և տարեվերջին ծնող-ուսուցիչ հանդիպման ժամանակ հանձնվում է սովորողի ընտանիքին:

**Հաշվետվության ձևաթղթեր՝ Report Card՝ ամեն վերառարկայական թեմայի, ինչպես նաև կիսամյակի վերջում յուրաքանչյուր սովորողի համար բոլոր մասնագետների մասնակցությամբ կազմվում է ամփոփ տեղեկատվություն ուսումնառության գործընթացի ու արդյունքների վերաբերյալ՝ PYP բոլոր տարրերի (Report Card): Գնահատումն իրականացվում է հատուկ էլեկտրոնային ձևաթղթի միջոցով և ավագ մանկավարժի կողմից ի մի բերվելուց հետո ուղարկվում է սանի ծնողներին թեմայի ավարտից հետո 2 շաբաթվա ընթացքում:

***ԿԴԾ ստուգատես (PYP Exhibition)*

PYP ստուգատեսը ամփոփիչ գնահատման օրինակ է: 4-րդ դասարանի սաները մշակում և ներկայացնում են իրենց անհատական կամ խմբային նախագծերը վերառարկայական թեմաների շրջանակներում՝ ներկայացնելով PYP բոլոր տարրերը:

Այն իրականացվում է որպես մի մեծ հետազոտություն, որը դպրոցը նշում է 4-րդ դասարանի ավարտին ծնողական համայնքի, աշխատակիցների, հյուրերի մասնակցությամբ: Գործընթացին մասնակցում են նաև միջին դպրոցի սաները, ուսուցիչները, մանկավարժական առաջնորդության անդամները:

7. Այսպիսով, արդյունավետ գնահատումը հնարավորություն է տալիս.

7.1. <u>Սովորողներին՝</u>

- կիրառելով ուսուցման տարբեր ձևեր, մտավոր կարողություններ՝ դրսևորել գիտելիքների ամբողջությունը, հասկացությունների ընկալումն ու հմտությունները,
- նախապես տեղեկանալ և հասկանալ, ինքնուրույն ընտրել կամ մշակել այն չափանիշները, որոնց պետք է համապատասխանեն իրենց աշխատանքի արդյունքները, վերլուծել իրենց և ուրիշների ուսումնառությունը և բացահայտել՝ ինչը կարիք ունի բարելավման,
- իրենց սովորածը հաղորդել ուրիշներին
- ստանալ հետադարձ կապ հատուկ կրթական կարիքներին համապատասխան (լոգոպեդական, հոգեբանական և այլն):

7.2. <u>Ուսուցիչներին</u>՝

- տեղեկատվություն ստանալ ուսուցման յուրաքանչյուր փուլի մասին՝ հաշվի առնելով սովորողների պահանջները և ուսուցիչների ուսումնասիրությունները,
- մշակել և զարգացնել ուսուցման արդյունավետ մոտեցումներ՝ հաշվի առնելով յուրաքանչյուր սովորողի անհատական առանձնահատկությունները, մտավոր կարողություններն ու մշակութային տարբեր արժեքները,
- համագործակցաբար վերլուծել և բարելավել սովորողների առաջընթացը,
- խթանել ստեղծարարությունը, նորի ստեղծումն ու զարգացումը:

7.3. <u>Ծնողներին</u>՝

- ծանոթանալ իրենց երեխայի(ների) ուսումնառության և զարգացման վերաբերյալ փաստերին,
- աջակցել ուսումնական ծրագրի իրականացմանը և դպրոցում իրականացվող աշխատանքներին,
- ապահովել մշտական կապ դպրոցի և դասավանդողների հետ:

8. Կապը մյուս քաղաքականությունների հետ

Դպրոցի մյուս քաղաքականությունների հետ համադրումը նպաստում է, որ սովորողի ուսումնառության արդյունքները լինեն հավաստի և իրական:

8.1. Ընդունելություն – Գնահատում – Ներառականություն-Լեզուների ուսուցում

Սովորողի ուսումնական և դպրոցին հոգեբանորեն պատրաստվածության մակարդակների առաջին գնահատումը կատարվում է ընդունելության ժամանակ: Դպրոցը, հաշվի առնելով սովորողների տարբեր կարիքները և կատարելով համապատասխան հարմարեցումներ, օգնում է բոլոր սովորողներին հասնել առավելագույնին: Ուսուցիչները, հատուկ մանկավարժները, լոգոպեդները և հոգեբանները համատեղ աշխատում են յուրաքանչյուր սովորողի ուսումնառության ընթացքում՝ համաձայն Լոգոպեդական ծառայության աշխատակարգի: Ծնողները մշտապես ներգրավված են և տեղեկացված՝ ցանկացած աջակցության գործընթացում:

8.2. Գնահատում – Ակադեմիական ազնվություն

Ակադեմիական ազնվությունը խթանելու համար կարևորվում է սովորողի ակտիվ մասնակցությունն ու ներգրավվածությունը: Դպրոցը հավասարաչափ կարևորում է ինչպես արժեքներն ու վարքը, այնպես էլ ակադեմիական կարողությունները: Գնահատման նպատակն է օգնել սովորողին հասկանալ՝ որքան է նա առաջ գնացել և ինչքան դեռ կա սովորելու: Այդ պատճառով բոլոր սովորողներին խրախուսվում է բարձրաձայնել իրենց դժվարությունները՝ խթանելով պատասխանատվությունն ու ազնվությունը:

Այս քաղաքականությունը ստեղծվել է ՄԲ ակադեմիական ազնվության սկզբունքի ընդհանուր ընկալումն ապահովելու համար՝ որպեսզի մեր սովորողների վավեր գնահատումը լինի հուսալի և արդար: Արդյունքները չեն կարող արդար լինել, եթե որոշ սովորողներ անհիմն առավելություն են ունեցել մյուսների նկատմամբ:

9. Գնահատման քաղաքականության փաստաթղթի վերանայում

Դպրոցը գնահատման քաղաքականությունը և գնահատման վերաբերյալ համաձայնությունները վերանայում է յուրաքանչյուր երկու տարին մեկ անգամ, ինչպես նաև ըստ անհրաժեշտության:

10. Վերանայման ամփոփագիր

Ժամկետ	Ում կողմից է վերանայվել	Հիմնական փոփոխություններ
2024-2025 ուստարի	ԿԴԾ համակարգող, ԿԴ ուսուցիչներ	Բովանդակային փոփոխությունները համապատասխանեցվել են ՄԲ և ՀՀ պետական չափորոշչի ստանդարտներին, թվանշային գնահատումը հանվել է 4-րդ դասարանից, հստակեցվել է կապը այլ քաղաքականությունների հետ
2022 հունիս	ԿԴԾ համակարգող, ԿԴ ուսուցիչներ	Վերանայվել է գնահատման համակարգը, բառային բնութագրիչները:
2020 հունիս	ԿԴԾ համակարգող, ԿԴ ուսուցիչներ	Հստակեցվել են սաների ձեռքբերումների հաշվետվությունների ժամկետները, եռակողմ հանդիպումների ժամկետները, ընդհանուր փաստաթուղթը վերանայվել է:

Վերանայվել է 2025 թվականի հուլիսին:

Աղբյուրներ.

- Making the PYP Happen: A Curriculum framework for international primary education, IBO, 2009.
- From Principles to Practice, IBO, 2018.
- Programme Standards and Practices, IBO, 2020
- https://www.arlis.am/hy/acts/174760
- https://www.silveroaks.co.in/wp-content/uploads/2024/02/Assessment-Policy_-Silver-Oaks-International-school-_Oakdale-campus.pdf

Գնահատման քաղաքականության հավելված 1

1. Սովորողի ուսումնառության արդյունքների կիսամյակային գնահատումը Մայրենի, Օտար լեզուներ և Մաթեմատիկա առարկաներից ձևավորվում է կիսամյակի ավարտին տրվող գրավոր և/կամ բանավոր աշխատանքի գնահատումից, ինչպես նաև կիսամյակի ընթացքում սովորողի կողմից դրսևորած առաջընթացով:
2. Որևէ առարկայից անհատական ծրագրով սովորող սաների ուսումնառության գնահատումը իրականացվում է՝ հաշվի առնելով իր համար կազմված ուսումնական ծրագրի չափորոշչային պահանջները:
3. Անհատական ուսումնական պլանով աշխատող սովորողների ձեռքբերումների ամփոփիչ գնահատումը կազմակերպել համաձայն Ներառական կրթության քաղաքականության:
4. Եթե սովորողը հարգելի պատճառով բացակայել է և չի կատարել ամփոփիչ առաջադրանքը, ապա դպրոց ներկայանալուց հետո՝ առնվազն երկու շաբաթվա ընթացքում, լրացնում է բաց թողած աշխատանքը:
5. Սովորողի՝ այլ դպրոց տեղափոխվելու դեպքում տրամադրվում է սովորողի Կիսամյակային/տարեկան հաշվետվության վերջին ձևաթուղթը/ Semester Report Card:
6. Առարկայական գրավոր և բանավոր ամոփիչ աշխատանքների գնահատման համար օգտագործվում է **Աղյուսակ 3**-ը.
7. PYP ստուգատեսի վերջնական գնահատումն իրականացվում է PYP ստուգատեսի ռուբրիկով՝ օգտվելով **Աղյուսակ 3**-ից:
8. ԿԴ-ից ՄԴ փոխադրվելիս յուրաքանչյուր սանի համար մասին տեղեկատվություն է փոխանցվում միջին դպրոց, որը ներառում է նրա բնութագիրը և 4-րդ դասարանի վերջին կիսամյակի հաշվետվության ձևաթուղթը:

Վարկանիշային աղյուսակ

Աղյուսակ 3.

Գնահատականիշ	Կատարված աշխատանքի /չափորոշչի պահանջի կատարման ծավալը	Չափորոշչային պահանջի համապատասխանություն	Գնահատման բնութագիր
A+	97-100%	**Գերազանցում է սպասելիքները** **Exceeding expectations**	Սովորողն ունի բովանդակային լայն գիտելիքներ և խորը ընկալում: Ի լրումն վերոնշյալի, սովորողը հասել է կարողունակությունների շատ բարձր մակարդակի՝ ուսումնառության և հմտությունների առումով և կարող է կիրառել այդ գիտելիքներն ու հմտությունները անծանոթ իրավիճակներում: Դրսևորում է յուրահատուկ, ստեղծարար մոտեցումներ, մշտապես ներկայացնում է որակյալ աշխատանք:
A	90-96%	**Լիովին համապատասխանում է սպասելիքներին** **Completely meeting expectations**	Սովորողն ունի բովանդակային լայն գիտելիքներ և խորը ընկալում, կարող է պատրաստակամորեն կիրառել այդ գիտելիքները տարաբնույթ իրավիճակներում:
B	75-89%	**Համապատասխանում է սպասելիքներին Meeting expectations**	Սովորողն ունի բովանդակային համապատասխան գիտելիքներ և ընկալում, ինչպես նաև բարձր մակարդակի կարողունակություն ուսումնառության և հմտությունների առումով, կարողանում է կիրառել այդ գիտելիքներն ու հմտությունները իրեն առաջարկվող իրավիճակների գերակշիռ մասում:
C	60-74%		Սովորողը բովանդակության գլխավոր ոլորտների վերաբերյալ ունի հիմնարար գիտելիքներ և ընկալում, ի վիճակի է դրանց հիման վրա ձևավորված հմտությունները կիրառելու որոշ իրավիճակներում:
D	50-59%	**Մոտենում է սպասելիքներին (բավարար)** **Approaching expectations (Satisfactory)**	Սովորողը բովանդակության գլխավոր ոլորտների վերաբերյալ ունի տարրական գիտելիքներ և ընկալում: Ունի կարողունակությունների սահմանափակ մակարդակ ուսումնառության և հմտությունների առումով: Ի վիճակի է դրանք կիրառել հազվադեպ իրավիճակներում:
E	25-49%	**Կարիք ունի ամրապնդման / չի մոտենում սպասելիքներին**	Սովորողն ունի նվազագույն գիտելիքներ և ընկալում բովանդակության սակավաթիվ ոլորտներում, հասել է շատ սահմանափակ կարողունակության ուսումնառության որոշ գործընթացների և հմտությունների առումով:
N	24 % և քիչ	**Needs strengthening (Not yet approaching expectations**	Չի համապատասխանում նվազագույն գնահատականի պահանջին/չի գնահատվում այդ ժամանակահատվածում

Վերանայվել է 2025 թվականի հուլիսին: